

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 փետրվարի 2015 թ.

N 92-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ  
ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2015 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## **Ծ Ր Ա Գ Ի Ր**

### **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ**

#### **1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերջին տարիներին նկատվում է գիշատիչների (գայլեր, շնագայլեր) գլխաքանակի կտրուկ աճ, որն արտահայտվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարբեր համայնքներում գայլերի հարձակումներով ինչպես ընտանի կենդանիների, այնպես էլ մարդկանց վրա, որը զգալի տնտեսական վնաս է հասցնում անասնապահությանը: Գայլերի, շնագայլերի գլխաքանակի աճման հանգամանքը առաջ է բերել ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև բնապահպանական լուրջ խնդիրներ, ինչն արտահայտվում է մի շարք կենդանատեսակների, այդ թվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներին հասցված վնասով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գիշատիչների գլխաքանակի կարգավորման նպատակով նախատեսվում է 2015 թվականին շարունակել կենսատեխնիկական միջոցառումների իրականացումը:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ավելացնել, վերականգնել նաև առանձին վայրի կենդանիների, թռչունների թվաքանակը:

#### **2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2015 թվականի ծրագրի շրջանակներում կաջակցվի որսորդներին կենսատեխնիկական միջոցառումների իրականացման հարցում: Տարածքային բնապահպանական, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ կկազմակերպվեն շուրջկալային որս տարբեր շրջանների համապատասխան տարածքներում: Կկանոնակարգվի գիշատիչների որսը առանձին որսորդների կողմից հատկապես անտառային ֆոնդի տարածքում:

Միջոցառումների կատարման հետ զուգահեռ կուժեղացվի տեսչական վերահսկողական գործառույթների իրականացումը:

Նման միջոցառումների իրականացմամբ հնարավոր կլինի կարգավորել գիշատիչների գլխաքանակը և պոպուլյացիայի բնականոն մակարդակը՝ դրանով վերականգնելով բնության մեջ խախտված էկոլոգիական հավասարակշռությունը,

ինչպես նաև հնարավոր կլինի կանխարգելել ընտանի կենդանիներին և մարդկանց հասցվող էական վնասը:

### **3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Գիշատիչների (գայլերի, շնագայլերի) գլխաքանակի կարգավորման համար կենսատեխնիկական միջոցառումների իրականացման և որսորդների խրախուսման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից կհատկացվի 5 000 000 (հինգ միլիոն) դրամ, որից՝

1) գայլերի գլխաքանակի կարգավորման միջոցառումների իրականացման համար՝ 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ.

2) շնագայլերի գլխաքանակի կարգավորման միջոցառումների իրականացման համար՝ 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**